Հավելված 2
2024 թ. «7» փետրվարին
կնքված N ԴՏՊ-1141-11018/24 *ԱՐՄ* պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N_9_

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Արմավիրում» |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1141-11018/24 ԱՐՄ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2024-31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2024-30.09.2024 |
| **Ներկայացման օր** | 14.10.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Անահիտ Նահապետյան,<br>Ցերեկային կենտրոնի տնօրեն |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Միասնական սոցիալական ծառայությունների Արմավիրի տարածքային կենտրոնի հետ համագործակցություն.** Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունը ՄՍԾ տարածքային կենտրոնի հետ, եղել են վերջինիս կողմից ուղղորդումներ, որոնք ընդգրկվել են կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել են թվով 20 նոր շահառուների կարիքներն ու կարողությունները, որոնք ընդգրկվել են մատուցվող ծառայություններում: Ընդգրկվել են մարզի քաղաքային և գյուղական համայնքների երեխաներ, որոնք ընտրվել են ըստ տարբեր չափանիշների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, Արցախից տեղահանված ընտանքիների երեխաներ, խոցելիության այլ չափանիշներ: Արդյունքում առկա է հստակ նկարագիր յուրաքանչյուր շահառուի կարիքների և կարողությունների վերաբերյալ:

- **Անհատական զարգացման պլանի մշակում**. Գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից մշակվել են բոլոր գնահատված շահառուների անհատական զարգացման սոցիալ-հոգեբանական պլանները: Արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար ունենք հստակ պլան, որի հիման վրա իրականացվել են անհրաժեշտ պարապմունքներն ու ծառայությունները:

- **Ծառայությունների, պարապմունքների ու խմբակների նախանշում**. Շահառուների համար հաշվետու ժամանակահատվածում մշակվել և/կամ թարմացվել է ծառայությունների ու պարապմունքների ժամանակացույց: Կենտրոնում գործում են արտ թերապիայի և նկարչության խմբակները, որտեղ ներառված են 10-15 երեխաներ:

- **Շահառուների ծնողների հետ համաձայնագրերի կնքում**. Բոլոր շահառուների ծնողների հետ կնքվել են համաձայնագրեր՝ անվճար ծառայությունների մատուցման մասին: Շահառուների ծնողները տեղեկացվել են աշխատանքային ժամանակացույցի մասին: Արդյունքում ունենք իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և

ծառայություն ստացողի միջև:

- **Սոցիալական աշխատանք շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների՝ ընտանիքի հետ վերամիավորման ուղղությամբ**. Հաշվետու ժամանակահատվածում դիմել ենք Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ին՝ շուրջօրյա հաստատությունում բնակվող հնարավոր շահառուների դեպքերի քննարկման և վերամիավորման աշխատանքներ տանելու նպատակով: Պատասխան դեռևս չենք ստացել: Իսկ «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի դեպքերը նորից քննարկել են մարզպետարանի համապատասխան բաժնի հետ, որը վերահաստատել է կարծիքը և ընդգծել վերամիավորելուն ուղղված քայլերի անարդյունավետությունը: Դեպքերը քննարկվել են նաև «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրինության հետ, վերջիններս նույնպես համամիտ են մարզպետարանի կարծիքի հետ, այսպիսով, շարունակելով իրենց հարկի տակ պահել քննարկված երեք դեպքերի շահառուներին:

- **Ամենօրյա պարապմունքների, խմբակների ու ծառայությունների մատուցում**. Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին հաշվետու ժամանակահատվածում մատուցվել են անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ: Ծառայություն է ստացել հուլիսին՝ 117, օգոստոսին՝ 121, սեպտեմբերին՝ 132 երեխա, որոնցից 17-ը Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներ են: Արցախից տեղահանված երեխաների հետ իրականացվող աշխատանքների հիմնական ուղղվածությունը վախերի ու դժվարությունների հաղթահարումն է, շփումը միմյանց և տեղացի երեխաների հետ, լեզվական խոչընդոտների հաղթահարումը, փոխօգնությունը, ինչպես նաև նոր միջավայրին ադապտացիան: Կենտրոնում գործում են արտ թերապիայի և նկարչության խմբակները: Այստեղ շահառուները պատրաստում են բացիկներ, տարբեր մեթոդներով ստեղծում են դիզայնի տարբեր ատրիբուտներ, զարդարանքներ, կախազարդեր, կատարում են արտ թերապևտիկ աշխատանքներ, ավազաթերապիա:

  Հաշվետու ժամանակահատվածում երեխաների հետ կազմակերպվել են մրցույթային, սպորտային խաղեր, որոնց միջոցով զարգացնում ենք երեխաների մրցակցային կարողությունները, ձևավորում թիմային համագործակցային հմտություններ, խթանում վառ էմոցիաների արտահայտումը թիմային միջավայրում: Երեխաները սովորում են արագ կողմնորոշվել՝ սահմանված ժամանակահատվածում գործողությունը ավարտին հասցնելու համար:

  Հաշվետու ժամանակահատվածում ուսուցանել և բեմականացրել ենք «Կարմիր գլխարկ» հեքիաթը: Նմանատիպ պարապմունքները դրական են անդրադառնում երեխաների ինքնագնահատականի, ինքաարտահայտման, սեփական ուժերին հավատալուն: Երեխաներից յուրաքանչյուրն ուներ իր առջև դրված առաջադրանքը, որը պետք է կատարեր յուրովի՝ գործի դնելով սեփական ստեղծագործական միտքն

ու, երևակայությունը: Բեմականացումը արդյունավետ միջոց է երեխաների համար պատկերավոր դարձնելու բարու և չարի կերպարները: Այս բեմականացումը իրական դարձավ ի շնորհիվ երեխաների ակտիվ փոխհամագործացության և մասնագեստների կողմից տրված հրահանգների մաքսիմալ կատարմամբ:

Խաղերի կերպով նշեցինք նաև հայ առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը՝ Վարդավառը: Շոգ եղանակը նպաստեց բակային խաղերի կազմակերպմանը՝ զուգորդելով դրանք ջուր ցանելով միմյանց վրա: Երեխաները շատ ակտիվ և ուրախ օր ունեցան կենտրոնի բակում, որը նաև տեսանկարահանվեց ԱԶԿ ՀԿ-ի հանրային կապերի պատասխանատուի կողմից:

Երեխաների համար կազմակերպվել է արտակարգ իրավիճակներում զգուշության կանոնների իմացությանը նվիրված սեմինար: Դիտեցինք արտակարգ իրավիճակներում ճիշտ կոմնորոշվելու մասին տեսանյութ, մասնավորապես երկրաշարժերի և հրդեհների ժամանակ, մեր ստացած գիտելիքները ամրապնդեցինք հարց ու պատասխանով, իսկ քարտային խաղով ևս մեկ անգամ վերհիշեցինք զգուշության կանոնները:

Ամենօրյա ծառայությունների մատուցման շրջանակներում կենտրոն հաճախող բոլոր երեխաներին տրամադրվում է անհրաժեշտ սնունդ, որն իրականացվում է՝ գնելով արդեն պատրաստի փոքրիկ սննդի ընդմիջում:

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվել է նաև անձնական օգնականի ծառայությունը թվով 4 երեխաների, որոնց մատուցվել է ուղեկցման ծառայություն: Այս երեխաները կենտրոն են գալիս հարակից գյուղական համայնքից, ծնողներն աշխատում են և չեն կարող երեխաներին բերել կենտրոն, իսկ երեխաներն ունեն խնդիրներ, չեն կարող կենտրոնի մեքենայով մենակ գալ կենտրոն: Ուստի իրականացվել է ուղեկցման ծառայություն անձնական օգնականի կողմից, որի պարտականությունները դրված են կենտրոնի 2 մասնագետների վրա, որոնք հավասարապես իրականացնում են անհրաժեշտ աշխատանքները:

- **Ծնողական դասընթացների կազմակերպում.** Ծնողների հետ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 6 խմբային քննարկում սեմինար, որին մասնակցել է 49 ծնող: Սեմինարների թեմաներն են եղել. «Երեխայի սուտ խոսելը, դրա պատճառները. Սուտ խոսելու ժամանակ միջամտության ձևերը»: Հուլիսին անցկացված սեմինարի 2-րդ թեման վնասակար սովորություններն էին: Խոսվեցին տարբեր տարիքային խմբերի երեխաների մոտ առկա վնասակար սովորությունների մասին, դրանց հնարավոր կանխման, ինչպես նաև հետևանքների վերացման կամ մեղմացման մասին: Օգոստոս ամսին իրականացված սեմինարների թեմաներն են եղել՝ «Արձագանք զայրացած երեխային»: Մասնագետի կողմից ներկայացվեց, թե ինչպիսի մոտեցումներ կարելի է ցուցաբերել զայրացած երեխայի նկատմամբ՝

առաջին հերթին փորձելով պարզել զայրույթի պատճառը: Այնուհետև իրականացվեց սեմինար, որի թեման վերաբերում էր ծնողների համար սթրեսի կառավարմանը: Խոսվեց ծնողների մոտ առկա սթրեսի հնարավոր ազդեցությունների մասին երեխաների վրա, և դրանց հետևանաքերի մասին: Ներկայացվեցին որոշ մեթոդներ սթրեսը կառավարելու և նվազեցնելու համար: Սեպտեմբերին կազմակերպված առաջին սեմինարի թեման էր՝ «Պատիժ և խրախուսանք»: Մասնագետի կողմից ներկայացվեց, թե ինչպիսի մոտեցումներ և որ դեպքերում կարելի է կիրառել խրախուսանքն ու պատիժը և դրանց ինչպիսի դրսևորումներն են ընդունելի: Սեմինարի հաջորդ թեման վերաբերում էր հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ գերխնամքին, դրա հետևանքները ընտանիքի մյուս անդամների ու երեխաների վրա: Սեմինարին մասնակցում էին հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ, որոնց համար թեման շատ ակտուալ էր:
Բոլոր սեմինար քննարկումներին մասնագետի կողմից տրվել են խորհուրդներ, տանը երեխաների հետ աշխատելու հիմնական մեթոդներ ու մոտեցումներ:

Հաշվետու ժամանակահատվածում, նախապատրաստվելով «Ոչ բռնությանը» միջազգային օրվան, արդեն սեպտեմբեր ամսվա ընթացքում «Արևածագ» կենտրոնը իրականացրել է իրազեկման հանդիպումներ երկու գյուղական համայնքների մանկապարտեզների ծնողների հետ, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 54 ծնող: Հանդիպումները նպատակ ունեին խոսել բռնության, դրա տեսակների մասին, այնուհետև՝ իրազեկված լինելու և բռնությունը կանխարգելելուն ուղղված քայլերի մասին: Իրազեկման քարոզարշավը շարունակվելու է նաև հոկտեմբեր ամսվա առաջին շաբաթում կենտրոնի երեխաների և նրանց ծնողների համար:

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Սոցիալ-հոգեբանական և վերականգնողական ծառայությունների մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների/միջինում՝ 123 երեխա,
- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների (մասնագիտական կողմնորոշում, գեղագիտական դաստիարակություն, անձի զարգացում) զարգացում/խմբակների գործում,

- Շահառուների ծնողների ընդգրկվածությամբ իրականացվող դասընթացներ/ծնողական 6 սեմինարների անցկացում,
- Համագործակցություն շուրջօրյա խնամքի երկու հաստատության հետ, հնարավոր վերամիավորման դեպքերի քննարկում, աշխատանք այդ ուղղությամբ:
- Համագործակցություն մարզպետարանի հետ շուրջօրյա խնամքի հաստատությունում գտնվող երեխաների կենսաբանական ընտանիքների դեպքերի ուսումնասիրության վերաբերյալ քննարկում, աշխատանք հնարավոր վերամիավորման դեպքերի ուղղությամբ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատանքների և մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ին պատկանող Արևածագ սոցիալական էջում: Հոդվածները հասանելի են հետևյալ հղումներով.
https://www.facebook.com/Arevatsag/posts/927664489402569
https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid02veMtXfdjbCtd3brC7DZqiYyZ8ZN4VETu2V4PetgDJghuNDLpkLHQqAPCG1rHSpSKl
https://www.facebook.com/armavirdc/videos/4013770065525802
https://www.facebook.com/Arevatsag/posts/95416731341895
https://www.facebook.com/Arevatsag/posts/966258312209853

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում խնդիրներ չեն առաջացել, որոնք կխոչընդոտեին կենտրոնի ծառայությունների անխափան մատուցմանը:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

- Ծառայությունների մատուցում կենտրոնի շահառուներին ըստ հաստատված ժամանակացույցի,
- Արտ թերապիայի և նկարչության խմբակների գործում,
- Նոր շահառուների կարիքների և կարողությունների գնահատում, սոցիալական աջակցման պլանի կազմում, պայմանագրերի կնքում,
- Ծնողների համար 6 սեմինար հանդիպումների կազմակերպում, ամսեկան՝ 2,
- Երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունների հետ հանդիպումների իրականացում,
- ՄՍԾ տարածքային կենտրոնի հետ համատեղ աշխատանքների իրականացում, տունայցեր,

- Մարզպետարանի համապատասխան բաժնի հետ հանդիպման իրականացում վերամիավորված ընտանիքների, խնամակալ և խնամատար ընտանիքների հայտնաբերման և հնարավոր ծառայությունների մատուցման համար:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Կենտրոնի ծառայությունների մատուցման շրջանակներում ֆիզիոթերապևտի և ծնողական աջակցման խորհրդատուի հաստիքները կենտրոնի գործարկման ընթացքում նախատեսված չեն սույն ծրագրի աշխատանքային պլանով և բյուջեով, սակայն դրանք իրականացվում են «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ առավել ամբողջականացնելով կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները մարզի շահառուներին:

Իրականացվել է համագործակցային հանդիպում Արմավիրի մարզի Նոր Արմավիր, Հացիկ և Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզի, ընդամենը՝ 3 մանկապարտեզների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է «Արևածագ» կենտրոնը, նրա կողմից մատուցվող ծառայությունները, այնուհետև խոսվել է ընդհանուր ներառման մասին, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների ներառման և ինտեգրման մասին, այնուհետև՝ Արցախից տեղահանված երեխաների ինտեգրման մասին: Խոսվել է երեխաների հետ աշխատելու հիմնական առանձնահատկությունների մասին, և խնդիրների հայտնաբերման դեպքում համապատասխան մասնագետների մոտ ուղղորդելու կարևորության մասին՝ կանխելով հետագա բարդացումները: Հանդիպումներն իրականացվել է ծնողական աջակցման խորհրդատուի կողմից: Հանդիպումներին մասնակցել են մանկապարտեզների աշխատակազմի ընդհանուր թվով 21 ներկայացուցիչ:
Բացի այդ իրականացվել են նաև նույն մանկապարտեզների ընդհանուր թվով 74 ծնողների հետ ծնողական հանդիպումներ, որոնց ժամանակ խոսվել է երեխաների զարգացման առանձնահատկությունների մասին:
Համագործակցային այս հանդիպումների իրականացումը նույնպես կատարվում է «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2024.10.14 11:43:13 AMT